**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

«30» դեկտեմբերի 2021թ.

## ՀՐԱՄԱՆ N 675-Ա

«ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի N 1006-Ն որոշման հավելվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի հայտը և դեկտեմբերի 29-ի գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/-Երևան/UDYZ/ երթուղով 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2022 մարտի 26-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ ՈՒ Յ Լ Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն 017/2021
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՐԿՈՒ ԵՎ ԱՎԵԼԻ ՈՉ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 017/2021
TO THE AIRCRAFT OPERATOR OF REPUBLIC OF ARMENIA FOR TWO AND MORE CHARTER SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF ARMENIA

| | |
|---|---|
| Օդանավ շահագործողը<br>Aircraft Operator | «Ֆլայուան Արմենիա» ՍՊԸ<br>"Flyone Armenia" LLC |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը)<br>Type(s) of aircraft(s) | A320 |
| Հաճախականությունը<br>Frequency | շաբաթական 3 չվերթ<br>3 flights per week |
| Երթուղին<br>Air route | Երևան/UDYZ/ - Ստամբուլ/LTFM/ - Երևան/UDYZ/<br>Yerevan/UDYZ/ - Istanbul/LTFM/ - Yerevan/UDYZ/ |
| Թույլտվության գործողության ժամկետը<br>Permission validity | 01/01/2022 մինչև 26/03/2022<br>01/01/2022 till 26/03/2022 |

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
ACTING CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

Recoverable Signature
X
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266

30.12.2021
(տալու ամսաթիվը)
(date of issue)

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ**

---

**«24» հունվարի 2022թ.**

# Հ Ր Ա Մ Ա Ն N 24-Ա

## «ՖԼԱՅՈՒԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Զ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 1997 թվականի դեկտեմբերի 27-ի «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 675-Ա հրամանը և «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հունվարի 20-ի թիվ-6.20-01/22 գրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Նկատի ունենալով, որ «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ձմեռային ժամանակահատվածից սկսած՝ 2022 թվականի փետրվարի 2-ից՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/ երթուղով Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս երկու և ավելի ոչ

կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին, սույն կետում նշված երթուղով մեկնող ուղևորներին տրամադրվող «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» ենթակետով սահմանված արտոնության սկիզբը սահմանել 2022 թվականի փետրվարի 2-ը՝ 36 ամիս ժամկետով Երևան/UDYZ/-Ստամբուլ/LTFM/ ուղղության համար:

2. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

Recoverable Signature

X

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ